

ՏԵՍՈՒԹԻՒՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՅԻՅ.

Միջին Խաչկոյ խնդիրը վերջապէս կարգի դրուեցաւ։ վասնզի Անդրկոյ տէրութեան միջնորդութեամբ Սարաւենիոյ նաւ միացան Քուքանա, Ռոմանիա, Սուրենա եւ Փարմա, ուստի եւ ուրախութեան մեծամեծ հանդէսներ կկատարեն։

Գաղղիոյ տէրութեան կարծիքը կամ քաղաքականութիւնը այս նիւսիս մէջ քանի մը անգամ փոփոխուեցաւ, եւ կարելի է որ այսուհետեւ ալ փոփոխի՝ զանազան պարագայից պահանջմանը նայելով, բայց ընդհանրապէս այս կողմ որ Խաչկոյի իրենք իրենցմէ որոշեն մի՛նակին։

Սաղոյայի ու Նիքոսիոյ զաւառներուն Գաղղիոյ նեա միանալն եւս այժմու քաղաքական զլխաւոր խնդիրներուն մէկն եղաւ, քեպէտ եւ Սարաւենիոյ քաղաքներն հաւանութեամբ եղած է՝ Նափոյեան կայսեր միտքը այս գործողութեան մէջ, ինչպէս որ ինքն ալ ըսաւ, այն է որ խոր տէրութեան բնական սահմանները տակի որոշ կերպով գծագրուին, եւ սակայն Անդրկոյի, Գերմանացի, եւ մանաւանդ Ջուրիցե-

րացիք մեծ տեղութիւն ցուցուցին ասոր վրայ։ Կերենայ քէ մինչեւ որ նոր զեապանամոզով որոշմունք մը չընէ՝ այս խնդիրը չկրնար բոլորովին վերջանալ։

Խաչկոյ մէկ մասին Փիեմոնթի նեա միանալը քեպէտ շատ դիւրին կերպով եղաւ լմնցաւ, բայց պատը մարտի 29-ին մեծ բանապայքով բաւաւ բանապայքով հանեց այն ամենայն անձանց դէմ որ իրեն ժամանակաւոր իշխանութեանը տակ եղած երկիրներուն իւր ձեռքէն ելելուն պատճառ, մասնակից, խորհրդակից եղիր են։ Սակայն պապին բանագրանքէն պապականներն անգամ չվախցան, բոլ թ. ուրիշները, եւ Խաչկոյի բոլորովին արհամարհեցին զայն։

Սինդրոն Խաչկոյ նիւսիսային մասը կարգի դրուելու վրայ է, հարաւայինը՝ այսինչն Հռոմէայ ու Նափոյի տէրութիւնները՝ սոսկալի աշխարհական մէջ կառուցաւորին։ եւ Սիկիլիա կղզոյն բնակիչները մօտեւ երկու երեք անգամ օտք կան ու հաւանութեան, եւ դարձեալ հանգարտած չեն։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ.

Մարտի 22-ին Կայսերական վճռով որոշուեցաւ որ սովորական արծար ստակը նոյն յարգով ու կշռով եւ նոյն բաժանմունքով մնայ, եւ միանգամայն նոր արծար ստակ կարուի 20, 15, 10 եւ 5 քոփէկնոց՝ 72-ի փոքնով. որով այս նոր ստակին ներքին արժէքը արտաքին կամ անուանական արժէքէն հարիւրին 15 վար պիտի լինի։ Այս նոր ստակէն առաջին անգամ պիտի ելլէ միջին արծար քաղաքի ստակ։

— Ռուսաց տէրութեան ու Աւստրիոյ եւ Բուլղարիոյ մէջ դաշնադրութիւն եղեր է որ հեռագրաց ծախքը նոր կերպով սահմանուի։ Այս որոշման համաձայն՝ կայսերութեան ներքին երկիրներուն մէջ՝ 50 վերսը հեռագրութեան համար (որ մէկ ջօտի կհամարուի) 20 խօսք ունեցող հեռագրի մը վրձարքը պիտի լինի 20 քոփ, եւ ամեն 10 խօսքին աւելանալուն պիտի մճարուի 25 քոփէկ աւելի։

Այս տեղ զենք մուսաստանի ներքին հեռագրական բաժնի տէրութեան ծախքին տախտակը.

ՄԷԿ ՀԵՌԱԳՐԻ ԾԱԽՔԸ.

Գօտի. Վերսը.	Մինչեւ 20 խօսքի.		10 աւելի խօսքին.	
	Բալլի.	Քոփէկ.	Բալլի.	Քոփէկ.
Ա. մինչեւ 70	—	50	—	25
Բ. — 175	1	—	—	50
Գ. — 315	1	50	—	75
Դ. — 490	2	—	1	—
Ե. — 700	2	50	1	25
Զ. — 945	3	—	1	50
Է. — 1225	3	50	1	75
Ը. — 1540	4	—	2	—
Թ. — 1890	4	50	2	25
Ճ. — 2275	5	—	2	50
ԺԱ. — 2660	5	50	2	75

— Թեոդոսիային մինչեւ Մարտի շինուելու երկարութեան վրայ մինչեւ ցայժմ տեղեկութիւն չիմք դրած ամսագրոյ մէջ. վասնզի որչափ ալ ստույգ երեւնար մեզ քէ այս երկարութիւն անպատճառ պիտի շինուի՝ կտեսնենք որ երկրաչափոյն շատ կային, եւ իրենց երկարութիւնը առանց նիման չէր։ Իսկ այժմ որ բաւական գործունէութեամբ ձեռք գարնուեցաւ երկարութեան շինութեանը՝ հարկ է հետզհետեւ վրան տեղեկութիւններ տանք մեր ընթերցողաց։

Անցած տարի ամիսներով տարակոյս եղաւ քէ երկարութիւն արդեօք Թեոդոսիոյ վրայ պիտի շինուի քէ Սեւասթոփոլի. այն տարակոյսը վերջապէս փարատուեցաւ, եւ ամեն մարդ հաստատաց որ տէրութիւնը նորէն հաստատուի է երկարութեան շինուի Թեոդոսիոյ վրայ շինուի։ Իսկ այս տարի ձայն մը եղաւ քէ երկարութեան վրայ լինելու աշխատութիւնները երկու երեք տարի ալ պիտի ուշանան՝ մինչեւ որ վարչապետ Նիմիշ-Կոլորտի երկարութիւններուն շէնքը լմնանայ։ Բայց մօտեւ այս կարծիքն ալ վերցուեցաւ. եւ անա ոչ միայն Ռուսոյ գեղէն անդին սկստած հաւապարձը՝ մինչեւ տասը վերսի չափ տեղ՝ ամենայն գործունէութեամբ շինուելու վրայ է, այլ եւ իրեն ստույգ խօսք կատարուի որ քանի մը օրէն ճանապարհին շէնքը քուն քաղաքէն պիտի սկսի առաջ տարուի։ Արդէն Յոսեփայն նաեւ գնացեր են դէպ ի՞նքի՝ ճանապարհին վրայ դրուելու փայտերը բերելու համար, եւ քաղաքին քովերէն շատ մը քար կկրարուի ճանապարհին համար. հոգ փորելու եւ դիզելու աշխատողներն ալ օրէ օր աւելի կշտանան, վասնզի Թարսները Արեւելք պիտի երբամբ բսելով՝ մեծ մասը այս տարի ցան ըրած չին, ու պարագայ մնացին, ուստի սիրով կվազեն ճանապարհին վրայ աշխատելու։

ԿԱՅՆԵՐԱՇՆՈՐԶ ԱՐՏՈՆՈՒԹԻՒՆՔ

ԽԱՆՊԵԱՆ ՌԻՍՈՒՄԵԱՐԱՐԵՆ ԱՉԻՍ ՀԱՅՈՑ

Խալիպեան Ռուսումնարանին տպագիր ճայտարարութեան կտեսնուի որ այս Ռուսումնարանը արդէն իբրեւ մասնաւոր վարժարան՝ այլեւայլ արտօնութիւններ կամ ազատութիւններ ընդունած էր Կայսերական հրամանաւ, թէպէտեւ Ռուսաց տէրութեան սովորական դպրոցներուն կարգը մտած չէ ամէն բանի մէջ, եւ այն՝ որպէսզի աւելի ազատորէն մեր ազգին Ռուսումնական պիտոյիցը ծառայէ։

Քանի մը ազատութիւններ ալ այս տարի մարտի 4-ին ընդունեցաւ, որ ասոնք են.

Ա. Թէոդոսիոյ Խալիպեան Ռուսումնարանին հրաման է ունենալ իրեն համար սեպհական կնիք՝ հանդերձ Կայսերական կնքանշանով։

Բ. Ռուսումնարանը ազատ է դրուագաւոր թուղթ (сербоваа бумага) գործածելու պարտքէն. նոյնպէս ազատ է արձանագրութեանց համար առնուելու տուրքերէն (кредитныя пошлины), ինչպէս նաեւ իրեն վերաբերեալ ամէն տեսակ գրուածքներէն առնուելու տուրքերէն ընդհանրապէս։

Գ. Տէրութեան մեծ դպրոցներուն պէս՝ Խալիպեան Ռուսումնարանն ալ կրնայ դրսի երկիրներէ բերել տալ, առանց մաքս վրձարելու, իրեն ուսմանը համար պէտք եղած ամէն տեսակ բաները, միայն պարտական է ամէն անգամուն երբոր դրսէն բերել տայ գիրք կամ ուրիշ Ռուսումնական գործիքներ, զանձուց ոստիկանին տեղեկութիւն տալ։

Դ. Ռուսումնարանին շէնքերը ազատ են կալուածական տուրքերէ եւ ուրիշ պարտքեր ունենալէն առ քաղաքն Թէոդոսիոյ. բայց թէ որ այն շէնքերը վարձու տրուին, պարտական են քաղաքական տուրքերը վճարելու։

Վեհափառ ԿԱՅՄԱՐԸ բարեհաճեցաւ միանգամայն հաստատել Ռուսումնարանին աշակերտաց միաձեւ հագուստը, որոյ պատկերը ուրիշ անգամ կիրատարակեմք։

¹ Papier timbré.

² Droits d'enregistrement.